

## ԱՆԹԱՌԱՆՅԱՆ ԼԵՆԱ

### ԻՄ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Կա մի գյուղ սարերի բարձունքին,  
Ձորն ի վեր մացառներ քարքարոտ,  
Հայացքից կաթում է մասրենին,  
Ճամփեքին փռել է խոր կարոտ:

Կա մի տուն փայտաշեն ծածկույթով,  
Պատերին նկարներ հին ու նոր,  
Անփականք և անզանգ դռներով,  
Երբ գնաս նա բաց է ամեն օր:

Կա մի մայր կրծքափակ շորերով,  
Խոսքի մեջ աղքատիկ ու բարի,  
Պատեպատ լցված է ցավերով,  
Գուրգուրեն՝ լոկ արցունք կթափի:

Քեզ չի տա ցավերից ոչ մի բուռ,  
Կպատմի երջանիկ բաներից,  
Բաց կանի քեզ շոյող ամեն դուռ,  
Չի թողնի խռովես աշխարհից:

Ահա և բոլորը, ինչ ունենմ,  
Արևի և կյանքի չափ հարուստ,  
Թե տխրեն, ես այնտեղ կմեկնենմ  
Ցավերս ես այնտեղ կերկնենմ, –  
Դա բախտն է տրված ինձ վերուստ:

### ՍԻՐՈ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Տվե՛ք ինձ աշխարհի ճերմակ ձին  
Եվ ճերմակ թռչչքը ճայերի,  
Եվ Աստված բարձունքից իր գահի  
Չգործած մեղքերս թող ների:

Իմ վերքի շուշանները ծաղկած  
Քաղեցե՛ք և տվե՛ք աշխարհին,  
Տարիներն իմ տեսած ու ապրած՝  
Բալասան թող լինեն ցավերին:

Տուն կանչե՛ք թափառող բառերին,  
Պարզ ու ջինջ օրերը թող ծաղկեն,  
Եվ մարդիկ՝ ժպտալով արևին,  
Անտագնապ բարևեն ու անցնեն:

Տվե՛ք ինձ աշխարհի ճերմակ ձին  
Եվ գուլալ թռիչքը ճայերի...  
Եվ Աստված իր լուսե բարձունքից  
Չգործած մեղքերս թող ների: